

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

03.10.2016

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

### ՕՐԱԿԱՐԳ

1. 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման մասին: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման և անցկացման մասին հաշվետվություն: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/

### ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Ա. Ներսիսյանը ներկայացրեց 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփումը: Նա նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է ժամանակացույցի համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել: Լուծարքային շրջանին մասնակցած ուսանողների գերակշիռ մասը դրական գնահատական են ապահովել 1-ին լուծարքային շրջանի ժամանակ: Զեկուցողը ըստ կուրսերի ներկայացրեց լուծարքային շրջանի ընդհանուր պատկերը.

Պատմություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 17 ուսանող, որոնցից 16-ը 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ, իսկ 1-ը դրական գնահատական է ստացել 2-րդ լուծարքային շրջանում:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 6 ուսանող, որոնք 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ:

Հոգեբանություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 1 ուսանող, որը և 1-ին լուծարքային շրջանում ստացել է դրական գնահատական:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 3 ուսանող, որոնք 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականեր:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 4 ուսանող, որոնք 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականեր:

Տրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ լուծարքային շրջանին մասնակցել է 4 ուսանող, որոնք 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականեր:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

*Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, մ.գ.թ. Լ. Հարությունյանը, Զ.. Վարտանյանը, Ռ. Հարությունյանը:*

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:*

### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Ա. Ներսիսյանը ներկայացրեց 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների հետ: Զեկուցողը փաստեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան մատենավարության վիճակը:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

*Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, մ.գ.թ. Լ. Հարությունյանը, Զ.. Վարտանյանը, Ռ. Հարությունյանը:*

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

*2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Ներսիսյան  
Վ. Աղաբաբյան